

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՄԱՐԴԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՀԱՅԸ



Համամարդկային Գիծը Ռուբեն Սեւակի ստեղծագործության մէջ

Յատուկ «ՊԱՅԲԱՐ»-ին

«Մենք սփռի մեռնինք, որ հայ ազգը ապրի»
Ռ.Ս.

ԼՈՒՍՈՒՍ ՄՍՏՈՑՄԱՆ-ՏԱՐԱԳԾՄԱՆ

Գրականութեան մէջ կան այնպիսի առանձնայատկութիւններ, այնպիսի արժէքներ որոնք գրողի ստեղծագործութեան կու տան մնայուն արժէք մը, եւ գրողը կը բարձրացնեն համամարդկային պատուանդանին վրայ։ Այդ առանձնայատկութիւնները կ'առաջադրեն զգացումներն ու մտածումները համայն մարդկութեան, որոնք ներգրաւած են ժողովուրդներու սթայբարի, երազանքի, հոգևոր աշխարհի բոլոր դրսեւորումները, եւ ուր կը լսուի ժողովուրդներու իղձերու եւ երազանքներու արձագանգը։ Այսինքն, այն ինչ որ հասկնալի է եւ ընդունելի բոլոր ժողովուրդներու եւ բոլոր ժամանակներու համար, ունի համամարդկային արժէք։

Այսպէս կարելի է բնութագրել Ռուբեն Սեւակի ստեղծագործութիւնները։ Իր ժողովուրդի ճակատագրով տառապող ու տագնապող բանաստեղծը, բարձր արուեստով եւ հարուստ ներաշխարհով, անկրկնելի ինքնազոհ գեղարվեստական արժէքները կը բացայայտէ համաշխարհային իրականութեան առջեւ, արձագանգելով մարդկային կեանքի ամենաբազմապատկերներու պատկերելով այն ինչ որ ընդհանուր է եւ համամարդկային։

Եւրոպա ուսանած տարիներու, բանաստեղծը կրցած էր լաւ ըմբռնել Արեւմուտքի իրականութիւնը, հասարակական կեանքի մէջ տիրող հակասութիւնները, դասակարգելու հակամարտութիւնը, դրամին ուժը, որ ստրկացուցած էր մարդը, մերցուցած էր խիղճն ու մարդկայնութիւնը։ Այս մասին «Մարդերգութիւն» վիպերգին մէջ կ'ըսէ—

*Անցեալ տարի էր Տոգնած ապաքէն,
Շատ քաղաքակցիթ այս Արեւմուտքէն՝
Ուր խիղճը բառ մը ան, մարդը մեքենայ,
Աշխարհ գործարանն մը անխոնջ, անկանայ
Սէրը հաշիւ մ'է, կրօնքը՝ դրամ*

Մարդկութեան ճակատագրով մտահոգուած մեծահոգի բանաստեղծը, անձնական նեղ ապրումներէն անդին անցնելով, կ'երգէ տառասցսնքը թշուառութեան մէջ տուայտող յոգնատանջ հոգիներուն։

«Մարդերգութիւն» վիպերգին հերոսը իր մօր հետ կ'երթայ հայրենի գիւղի նկեղեցին, ուր ժողովուրդի խուռներամ բազմութիւնը եկած էր ներկայ գտնուելու գիւղի ջոջի երախայի մկրտութեան։ Հոն միաժամանակ բերած էին աղքատի մը երախան։ Հեղինակը նկարագրելով անոնց հակադրութիւնը, մէկը շքեղութեան, միւսը ցնցուտիներու մէջ կ'ըսէ—

*Մէկը նորածին որդին մեծատուն,
Մի'սը աղքատի ծնունդը անտուն
Մէկը բեհեզով բնած, մի'սը արթուն,
Մէկուն ժանեակներ, մետաքսի հիւսկէն,
Մի'սին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն,
Առաջնոյն ոսկի, ժանեակ բիւր տնասկ,
Երկրորդին ճակտին փուշի սեւ պսակ,
Մէկը Տէ՛ր աղգէն, մի'սը Գրա՛ստ*

ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ ՄԱՐԴԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՀԱՅԸ



Համամարդկային Գիծը Ռուբեն Սեւակի Անտեղծագործության Մէջ

Յատուկ «ՊԵՏՐՈՒՄ»-ին

«Մենք սփռի մեծինը, որ հայ ազգը սպրիտ
Բ.Ա.

ԼՈՒՍՈՒՄ ՄԱՍՆՈՍՏԱՆ-ՏԱՐԱԳՃՏԱՆ

Անարդարության դէմ իր ընդվուծը կ'արտայայտէ այսպէս՝
Բայց այս ի՛նչ արդար օրէնք մ'է խորին
Որ յղիացա՛ծ, ճոխ Մեծերը երկրին,
Իրե՛նց արգանդին մէջ կը հարուածէ:
Հաստատության խա՛լ պէտք մ'է գուցէ
Որ վիճածը նուեղ սերմերը Մեծին
Ի՛ր որովայնին իսկ գո՛գը հիւծին

«Իարմիր Դրօշակը» բանաստեղծության մէջ, ի յայտ կու գայ հեղի-
նակին ըմբոստ կեցածքը կեանքի օրէնքներուն դէմ.-

Ո՛ր, դէպի ո՛ւր...: Բաղքած կեանքեր համօրէն,
Իսպառ լքուած ստորուածներէն, մարդերէն,
Լուռ կերթային, խալ բնապղի մը հլու,
Նո՛ր Օրէնքի նո՛ր Նժար մը կերտելու...:
Ու ինձ այնպէս թընցառ թէ լռելեայն
Ճակատագրին թնւը կ'իշխէր իրենց վրան...
Բայց կ'երթային անոնք, Ի ԶԷՆ, Ի ՊԱՅԸԱՐ,
Արդարության կը դիմէին խոնջ, տրկար,
Արդարության որ ա՛յս կերպով պիտի գար...:

Ռուբեն Սեւակի արտայայտած այս միտքերը, ընկերաբանական մտա-
ծողութեան արտայայտութիւնն է, որ կը յանգի դասակարգային սրայ-
քարի գաղափարին՝ տիրողներուն տառալէլու, հասնելու հաստատության
յաղթանակին: Այս առումով, ան իրապաշտ ընկերվարական մըն է:

Բանաստեղծը խոնարհ խաւին, խեղճին ու տնտնային սատար կանգ-
նելով, մարդասիրական իր գաղափարներն ու մարդկային կեանքի հան-
դէպ իր ակզրուծքները կը հնչեցնէ «Այս Դանակը» վիպերգին մէջ: Այս-
տեղ արծարծուող նիւթը նոյնպէս դասակարգային հարցն է, ընկերային
հակադրութեան պատկերն է, թէ ինչո՞ւ ոմանք տէր են ու ոմանք գերի-

Հեղինակը պաշտպանելով աշխատատեղները, բանուոր դասակարգը
դիտելով որպէս կեանքի կառուցողներ, ընկերային բարոյականութեան
կրողներ, կը նկարագրէ շահագործող հասարակութեան մէջ ապրող
աշխատատեղին վիճակը, իր մտածումներուն հիմնական առարկան
դարձնելով մարդուն շահագործումը մարդուն կողմէ.-

Թէ բանուորն այնքան արտադրեր է շատ,
Ինչո՞ւ հաց չուի բանուորն անաշխատ...
Մարդկութիւն, սրտիւ ու թմբուկներ հնչուն՝
Աչքըդ գոց հաւատա, մի փնտտեր հնչուն,
Մտքալն ամօթ է, գողնալը ոճիր: «Այս Դանակը»

Եւ այսպէս, բանաստեղծը պատկերելով տիրող իրականութիւնը, եւ
ընդհանրապէս մարդկային կեանքը, համամարդկային հարցերու ընդմէջէն,
ապգային հարցն է որ կը բարձրացնէ. Իր տարաբայտ անիրաւուած

ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ ՄԱՐԴԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՀԱՅԸ



Համամարդկային Գիծը Ռուբեն Սեւակի Աստղծագործության Մէջ

Յատուկ «ՊԱՅՐԱՐ»-ին

«Մենք սփռի մեռնինք, որ հայ ազգը սպրիտ
Բ.Ա.

ԼՈՒՍՈՒՄ ՄԱՏՈՑՄԱՆ-ՏԱՐԱԳԾՄԱՆ

ալգին տառապանքն է որ կը հնչեցնէ՝ թէ ինչ պիտի ընելի անիրաւուած
ազգ մը ամբողջ, երբ կը մնայ անօթի եւ անօգնական—

*Ինչ կ'ընէ երբ ազգ մը մնայ անօթի,
Չնորին բահ ու բոխչ կը նետէ մէկդի,
Կը պիտուի տէգով, կը պիտուի սուրով,
Ու կ'երթայ ամէն միջոցներով վատ
Ազգի մը կըրխ մըղել յուսահատ...—«Այս Դանակը»*

Հայ գրողը կը սագնասպէր հասարակական հարցերով, կ'այրէր իր ժա-
մանակին, իր մողովուրդին եւ մարդկութեան ճակատագրի հարցերով,
երբ նոյն վիպերգին մէջ կ'ըսէ—

*Իսկ թէ խնջօք ես՝ ոչ որ չի հաճիր
Հաւատայ որ տղատ մեռաւ անօթի,
Կը խնայ վըրտաղ առանց ամօթի...—*

Եւ միթէ՞ հայերուն վրայ շինդացին մեծ տէրութիւնները, որունք
բար յոուսին պահեցին իրենց շուրջը կատարուածին՝ գործադրուող
քարտէրուն ու կոտորածներուն մասին, դառնալով հաւասարապօր
մեղսակիցները մեծ ոճիրին։

Անդրադատ նազով հայ ժողովուրդի դժբախտ ճակատագրին, ահաւոր
սպանդին, հայրենի հալը չքելու փաստին, այդ տառապանքին ցաւն ու
վրէժի պագումը կ'արտայայտէ ջերմ հայրենասիրութեամբ գրուած,
քարտուող ու յուսալքուող ժողովուրդին ուղղուած իր օրօրոցի երգով—

*Արիւն-հեղեղ յոյսեց այս սուրբ ձորերէն,
Բայց չի փախի՛ս, փարէ՛ երկրիդ, պայն սիրէ՛
Հողիդ վըրայ գերի մի՛ ուլար, այլ տիրէ՛...—
Օրօր ըսեմ քնանաս, «Վերջին Օրօր»*

Հեղինակին այս բարի ցանկութիւնները չհատեն իրականանալու, այլ
միայն ականատեսը դարձաւ հայու սպիւնով ողողուած հայոց աշխարհին...—

Բանաստեղծ ընկերներուն ձօնուած թրուպատութեան մէջ, Ռուբեն
Սեւակ պայքարի պագումներով համակուած, կ'անդրադատնայ հայ ժող-
ովուրդի տառապանքին, իրեն դէմ գործադրուող անչուր խժգոժու-
թիւններուն, արտայայտելով իր սերունդին տագնապը, իր մողովուրդին
արիւթեան շնորհքները—

*Մենք՝ որ մեր վերքէն երգեր կը շինենք՝
Մե՛նք, պրկուածներ հակատագրէն նենգ,
Ու մինչ տրիշներ առատ կը քամբեն
Խինդի սեղանէն, մուսային համբէն
Մենք կ'երթանք ըստոյզ Մահուան անսրաղ
Մե՛նք, հին Մարդկութեան ուշ ծրեած-աւաղ-
թրուպատութիւնը։*

ՌՌՐԷՆ ՍԵՒԱԿ ՄԱՐԴԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՀԱՅԸ



Համամարդկային Գիծը Ռուբեն Սեւակի Անտիժազործութեան Մէջ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

«Մենք սփռի մեռնինք, որ հայ ազգը ապրի»
Ռ.Ս.

ՆՈՐԱՐ ՄՍՏՈՑՄԱՆ-ՏԱՐԱԳԾՄԱՆ

Դառն իրականությունը չէր ընկճած սակայն հայու հոգին, չէր ընկճած հայուն ապրելու ու գոյատևելու աննկուն կամքը: Բանաստեղծը յարատևելու հաստոք ներշնչնչով, իր խօսքը կ'աւարտէ հայ կեանքի յաղթանակի գովերուով:—

Հրատապ արեւուն տակ հրապարակին,
Ահ'ա կ'երգեն դեռ, ու մինչ տրդա՛յ, կի՛ն.
Կը հասնին քիչ ծեղ ճամբաներէ,
Քչխարկն անցորդին լուռ կը կայկատէ
Իրենց նոհապնա երգիչն աղևոր:
—Տուէ՛ր, իրե՛նք են, Նոր Մարտկութեան Նո՛ր Թյուպատուրները:

«Վերջին Հայերը» բանաստեղծութեան մէջ կը հնչեն մեռած ընկերներու համար մորմոքի ձայներ, վաղ օրնորու յուշ, գայիք լաւ օրերու երազանք, գուց ու սէր մարդկանց հանդէպ:—

Հարս ունիք, մեզի հարսենւոր չիկայ...:
Սուգ ունիք, մեզի սգաւոր չիկայ...:
Ո՛ր մեղքին համար, ո՛վ է անիծեր
Հինգ հազար տարուան այս խեղճ ազգը ծեր...:
Չո՛րս միջիտնին մէ՛կ սպաստան չիկայ,
Եարիճան, հայ կայ՝ Հայութիւն չիկայ...:
Կ'երգեն Հայերը...:
Թագն առին, դապաղ մը տուին հայուն,
Մեր փառքն անցաւոր, մեր Մահն է կայուն...:
Արշա՛կ մեծ, որու բանակն ահապին
Տէգով կը ծածկէր փառքն արեգին՝
Ունակտիս կողած գերեզմանէ՛դ դուն
Գլուխդ վերցնէ՛իր, տեսնէ՛իր անտուն,
Անտէր Հայերը...:

Հայ կեանքը հաստատող, ոգեկոչող շեշտերով, լուսաւոր առաջադի հաստոքով ու կեանքի ազատութեան շունչով ողողուած «Վերջին Հայերը» բանաստեղծութիւնը, հայ ազատատենչ ոգիին արտայայտութիւնն է:—

Ո՛չ, ո՛չ: Արշաղոյսն իրենց պիտի գայ,
Ու եթէ չգայ առօտն ապագայ պիտ կոռոյն,
Մի՛նչ ե՛րբ, մի՛նչն յախտեան:

Ռուբեն Սեւակ իր կրակոտ ու բոցալիւս բանաստեղծութիւններով, իրականութեան իր խորաթափանց հայնացքով, կ'արձագանգէ այդ օրերու տխուր դէպքերուն եւ իրողութիւններուն, կ'ընդմզի տիրող անարդարութեան դէմ, ցան ու վիշտը հերոսաբար յաղթահարելով:

Պարզ ու անբաճոյճ ոճով գրուած իր հայրենասիրական բանաստեղծութիւնները, իրենց պարզութեան մէջ իսկ, կը մեան հարսզատ ու վզայուն էջերը հայ դիւցազներգութեան:

Ռուբեն Սեւակ մարտնչող հայ մտքի գաղափարախօսն է...:

Հալէպ